

**ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ**

Լ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի
աշխարհագրության ամբիոնի լաբորանտ*

Շուկայական հարաբերությունների գլոբալացումը, տեղեկատվական հասարակության ծնավորումն էականորեն փոխել են պատկերացումները: Եթե նախկինում տնտեսության ճյուղային կառուցվածքում շեշտը դրվում էր արտադրության վրա, ապա ներկայումս առաջատար է դարձել ծառայությունների ոլորտը, մասնավորապես զբոսաշրջությունը: Համաշխարհային ծավալներով զբոսաշրջությունը շահութաբերության բարձր մակարդակ ունեցող և արագ զարգացող ճյուղերից է: Զբոսաշրջությունն աշխարհում աշխատանքով ապահովում է 250 մլն մարդու, այսինքն յուրաքանչյուր 10-րդ աշխատող զբաղված է զբոսաշրջության ոլորտում: Այն յուրահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն առանձին երկրների տնտեսություններում, այլև միջազգային տնտեսական հարաբերություններում: Պատահական չէ, որ ՄԱԿ-ի կառուցվածքում 1975 թվականին ստեղծվեց զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը (ՁՀԿ), որը ներկայումս միավորում է 130-ից ավելի երկրներ: 1997 թվականի հոկտեմբերի 19-ից Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության 12-րդ ընդհանուր ժողովում Հայաստանի Հանրապետությունն ընդունվեց այդ կառույցի լիիրավ անդամ:

Հանգստի կազմակերպման, զբոսաշրջության ժամանակակից արդյունաբերությունը հանդիսանում է համաշխարհային տնտեսության ամենախոշոր բարձրարդյունավետ և առավել դինամիկ զարգացող ճյուղերից է, ինչը փաստում է ոլորտում վերջին տարիներին արձանագրված վիճակագրական ցուցանիշներով: Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների՝ 2012թ. հունվար-հունիս ամիսներին հանրապետություն են ժամանել 281034 զբոսաշրջիկներ, կամ 2011 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 5.1%-ով:

Հայաստանի զբոսաշրջային ներուժը գնահատելիս՝ անպայման պետք է հաշվի առնել այն փաստը, որ Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում համեմատաբար նոր երկիր է, ինչը նրան շատ գրավիչ է դարձնում միջազգային զբոսաշրջության հանրության համար:

Վերջին տասը տարիներին Հայաստանի զբոսաշրջության ոլորտում գրանցվել է զարգացման աննախադեպ աճ: Այնուամենայնիվ, համաշխարհային և տարածաշրջանային առումով Հայաստանում զբոսաշրջային արդյունաբերությունը բնութագրվում է միջազգային այցելուների համեմատաբար քիչ քանակությամբ: Հայաստանին են բաժին ընկնում եվրոպայում զբոսաշրջային այցելությունների միայն 0.08%-ը և համաշխարհային զբոսաշրջային այցելությունների 0.04%-ը:

Զբոսաշրջության ոլորտի գործարարության շարժառիթը ավանդաբար եղել է շահույթի հետապնդումը: Զբոսաշրջության տնտեսվարման ոլորտն աստիճանաբար ընդարձակում է իր նպատակների շրջանակը՝ առաջնահերթությունը տնտեսական դաշտից հետզհետե փոխանցելով սոցիալական և բնապահպանական ոլորտ: Այսօր զբոսաշրջային գործունեությունն անմիջական ներգործություն է ունենում տարածաշրջանի սոցիալական, մշակութային, կրթական, տնտեսական ոլորտների վրա: Զբոսաշրջությունը դադարել է լինել միայն տարածաշրջանային իրողություն՝ դառնալով համաշխարհային տնտեսական հարաբերությունների բաղկացուցիչ մաս:

Զբոսաշրջության կարևորության մեծացմանը զուգահեռ, աճում է նաև դրա մասնակցության և ոլորտի զբաղվածության գնահատման ունիվերսալ մեխանիզմների ստեղծման անհրաժեշտությունը: Այն պետք է հնարավորություն ստեղծի գնահատել երկրի զբոսաշրջային ոլորտի թերություններն ու կատարելագործման հնարավորությունները:

Վերջին երկու տասնամյակում զբոսաշրջության ոլորտում պետական մակարդակով իրականացված բարեփոխումները, մասնավորապես՝ ոլորտի հռչակումը որպես գերակա ճյուղ, մեծապես նպաստեցին Հայաստանում զբոսաշրջության կայացմանը: Սակայն կան բազում խնդիրներ, որոնք հնարավոր է լուծել միայն տնտեսության այլ ոլորտների, ինչպես նաև համաշխարհային ծրագրերի իրականացման և վերահսկման դեպքում:

Հայաստանի Հանրապետությունում ընդհանրապես, և Գեղարքունիքի մարզում մասնավորապես, զբոսաշրջության ոլորտի զարգացումը բախվում է մի շարք խոչընդոտների.

- **Սեզոնայնություն:** Գեղարքունիքի մարզում զբոսաշրջությունը բնութագրվում է խիստ սեզոնայնությամբ: Զբոսաշրջիկների գերակշռ մասը հանգստի նպատակով մարզ է այցելում ամռան ամիսներին, ինչը հյուրանոցային տնտեսությունների գործունեության աշխատանքում ստեղծում է ծանրաբեռնվածություն: Տարվա մնացած հատվածում զբոսաշրջության ոլորտում

գործունեությունն ծավալող կազմակերպություններում եկամուտը ցածր է, նվազում է նաև հյուրանոցային զբաղվածությունը:

- **Ենթակառուցվածքներ:** Մարզում զբոսաշրջության կայուն զարգացման և հայկական զբոսաշրջության արդյունքի որակի շարունակական ապահովման համար անհրաժեշտ է ձևավորել ու զարգացնել ոլորտը սպասարկող ենթակառուցվածքները:

- **Մարդկային ռեսուրսներ:** Գեղարքունիքի մարզում զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների մասնագիտական որակը, հմտություններն ու գիտելիքները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին: Անհրաժեշտ է զբոսաշրջության ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրերի մշակում՝ մասնավորապես մարդկային ռեսուրսների վերապատրաստում:


- **Ծառայությունների որակ:** Ծառայությունների որակի բարելավումն անհրաժեշտ է զբոսաշրջության ողջ արդյունաբերության մեջ, որը պետք է ուղղված լինի զբոսաշրջիկների անվտանգության, առողջության և սանիտարահիգիենիկ պայմանների պահպանմանը, նրանց իրավունքների պաշտպանության ապահովմանը:

- **Սոցիալական բնույթի խոչընդոտներ:** Ներկայումս զբոսաշրջությունից ստացված եկամտի շատ քիչ մասն է բաժին ընկնում մարզերին, քանզի հյուրանոցային տնտեսությունները, ժամանցի վայրերը կենտրոնացված են մայրաքաղաքում:

- **Շրջակա միջավայրի և մշակութային ժառանգության պահպանում և զարգացում:** Քանի որ մարզ այցելած զբոսաշրջիկներին հիմնականում հետաքրքրում է ոչ նյութական, մշակութային ժառանգությունները, ուստի այն պետք է պահպանվի և զարգանա:

- **Միջնուղային համագործակցություն:** Տնտեսության մյուս ճյուղերի հետ զբոսաշրջության փոխկապվածության ու համագործակցության անհրաժեշտությունը պայմանավորված է այն առանձնահատկություններով, որ այն ուղղակի և անուղղակի ազդեցություն ունի տնտեսության մյուս ոլորտների վրա:

Զբոսաշրջության կազմակերպությունների և տնտեսության մյուս ոլորտների միջև փոխադարձ կապն արտահայտված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Համագործակցություն զբոսաշրջային կազմակերպությունների և տնտեսության մյուս ոլորտների միջև

Զբոսաշրջային արդյունաբերությունը փոխկապակցված ձեռնարկությունների համակարգ է, որը զբոսաշրջիկներին տրամադրում է բոլոր անհրաժեշտ և բավարար զբոսաշրջային ծառայությունները, ապրանքները, այսինքն՝ տեղաբաշխման, տրանսպորտային միջոցների, հասարակական սննդի վայրերի, զվարճանքների, ճանաչողական, գործնական, առողջարանային, սպորտային և այլ նշանակության օբյեկտներ, էքսկլուսիվ ծառայությունների և զբոսավար-թարգմանիչների ծառայությունների ամբողջությունը:


Ձանգվածային զբոսաշրջության բուռն զարգացումը բերեց ինչպես միջազգային և ազգային տնտեսությունների այլ ճյուղերի, այնպես էլ գիտության, մշակույթի և կրթության համակարգի ակտիվ զարգացմանը: Զբոսաշրջային արդյունաբերությունն ունի մեծ նյութատեխնիկական բազա, ապահովում է մեծ թվով մարդկանց զբաղվածություն և կապված է ու փոխկապակցված տնտեսական համակարգի բոլոր ոլորտների հետ:

Զբոսաշրջությունը յուրաքանչյուր երկրի տնտեսության վրա ունենում է և՛ ուղղակի, և՛ անուղղակի ազդեցություն: Ուղղակի ազդեցությունը հաշվարկվում է զբոսաշրջիկների կատարած ծախսերից՝ նվազեցնելով նրա սպառման կարիքների համար երկիր ներմուծած ապրանքների և ծառայությունների արժեքը: Մյուս կողմից զբոսաշրջիկներին սպասարկող կազմակերպությունները

տնտեսական համագործակցության մեջ են մտնում շինարարական, գյուղատնտեսական, վերամշակող ձեռնարկությունների հետ և ազգային տնտեսության մեջ ձևավորում լրացուցիչ եկամուտներ: Վերջիններն էլ իրենցից ներկայացնում են անուղղակի ազդեցությունը կամ այսպես կոչված զբոսաշրջության մուլտիպլիկացիոն արդյունքը կամ էֆեկտը:

Զբոսաշրջության զարգացման և զբոսաշրջության հասկացության բնորոշման և զբոսաշրջության դասակարգման հարցում գոյություն չունի միասնական կարծիք կամ մոտեցում: Զբոսաշրջությունն առանցքային ոլորտ է դարձել գյուղական զարգացման և չքավորության նվազեցմանն ուղղված ծրագրերում և տեղական համայնքների մշակութային բազմազանության պահպանության ոլորտում: Այդ առումով Գեղարքունիքի մարզի համայնքները գյուղական զբոսաշրջության համար զգալի գրավչություն ունեն. լճափեր, անդնդախոր կիրճեր, հրաբխային զարմանահրաշ ձևեր, հանքային ջրեր և այլն:

Շատ գյուղական վայրերում զբոսաշրջությունը համարվում է գյուղի տնտեսության բազմազանեցման հիմնական տարբերակը՝ ուղղված գյուղական բնակչության համար նոր հեռանկարների ստեղծմանը: Գյուղական զբոսաշրջության ամենահայտնի տեսակներից է համայնքների վրա հիմնված զբոսաշրջությունը: Համայնքային զբոսաշրջության հիմնական բաղադրիչը զբոսաշրջության միջոցով ֆոնդերի հավաքագրումն է՝ ի նպաստ գյուղական տնտեսությունների զարգացման, որոնց կառավարման և վերահսկման գործընթացներում ներգրավված են մեծ թվով տեղաբնակներ, իսկ ստացված եկամտի մեծ մասը մնում է համայնքի ներսում: Համայնքային զբոսաշրջության առանձնահատկություններից է այն, որ համայնքային զբոսաշրջությունը ներառում է կրթությունն ու բացատրությունը՝ որպես զբոսաշրջային ծառայության բաղկացուցիչ մաս: Մշակութային տարածքներն ու ավանդույթները, որպես այդպիսին, առանձին արտադրանք չեն, սակայն լանդշաֆտների և մշակութային տարածքների համապատասխան մեկնաբանության դեպքում դրանք կարող են համայնքը գրավիչ վայր դարձնել: Բացատրական ծրագրերը կարևոր են զբոսաշրջիկների գիտելիքները զարգացնելու, ինչպես նաև այցելվող վայրերը ճիշտ ընկալելու համար: Այցելուների տպավորությունները կարող են ավելի մեծ լինել, եթե բացատրության արդյունքում բարձրանա նրանց բնապահպանական իրազեկությունը: Գյուղական զբոսաշրջության և զբոսաշրջության մյուս տեսակների միջև փոխադարձ կապը կարող ենք ներկայացնել հետևյալ գծապատկերների օգնությամբ:



Պատկեր 2. Գյուղական զբոսաշրջության կապը զբոսաշրջության այլ տեսակների հետ

Գյուղական զբոսաշրջության ոլորտում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է մշակել համայնքի կողմից ղեկավարվող և համայնքին ուղղված ռազմավարություն, որն ունի բնապահպանական, սոցիալական և տնտեսական նպատակներ և հասանելի խնդիրներ: Այն պետք է սկսվի համայնքի առանձնահատկությունների կամ տարածքի զբոսաշրջային ռեսուրսների սահմանմամբ, ներառյալ բնական ֆիզիկական առանձնահատկությունները կամ սոցիալական և մշակութային արժեքները և կարողությունները: Որպեսզի որոշվի, թե համայնքը ինչ տպավորություններ կարող է առաջարկել այցելուներին, անհրաժեշտ է արժեքների հետ մեկտեղ հաշվի առնել նաև համայնքի խնդիրների սահմանումը, որոնք կարող են լինել եկամտի ստացում, պահպանություն, հմտությունների զարգացում և այլն, որը կօգնի համայնքին որոշել, թե ինչ պետք է առաջարկել, ինչպես նաև մշակել համայնքային զբոսաշրջության զարգացման և կառավարման գործընթացը:

2013 թ. հոկտեմբերին Գեղարքունիքի մարզը թարմացրեց պայմագիրը Ֆրանսիայի Իզերի ղեկավարամենտի հետ, որի կետերից մեկն էլ համարվում է զբոսաշրջության զարգացումը:

Բանալի բառեր - զբոսաշրջություն, զբոսաշրջային ներուժ, Գեղարքունիքի մարզ, միջազգային զբոսաշրջային շուկա, ենթակառուցվածքներ, մարդկային ռեսուրսներ, զբոսաշրջային արդյունաբերություն

THE PECULIARITIES OF TOURISM DEVELOPMENT IN GEGHARQUNIQ REGION

L. A. MKRTCHYAN

Laboratory Assistant t of GSU Chair of Geography

Tourizm takes in world economy the frist place on creation of new workplaces. Tourism develops dinamically, becomes one of the most fastgrowing branches of the economy, an essential source of the income and population employment. Rural tourism is the sector of tourist branch focused on use of natural, cultural and other resoures of rural areas specifics for creation of a complex tourist product.

ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ ТУРИЗМА В ГЕГАРКУНИКСКОМ МАРЗЕ

Л. А. МКРТЧЯН

Лаборант кафедры географии ГГУ

Туризм занимает в мировой экономике первое место по созданию новых рабочих мест. Туризм развивается динамично, становится одной из наиболее быстрорастущих отраслей экономики, существенным источником доходов и занятости населения. Статья посвящена особенностям развития туризма в Гегаркуникском марзе, где есть все предпосылки для развития сельского туризма.